ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
ՀԱՍՏՈՑԱՇԻՆԱԿԱՆ
ԳՈՐԾԱՐԱՆ
ԲԲԸ

CMTM
MACHINERY
CHARENTSAVAN MACHINE
TOOL MANUFACTORY

ОАО
ЧАРЕНЦАВАНСКИЙ
СТАНКОСТРОИТЕЛЬНЫЙ
ЗАВОД

ՀՀ, ք.Չարենցավան, Եսայան փ. 2
RA, Charentsavan, Esayan str. 2
РА, Чаренцаван ул. Есаяна 2
Tel: +37422642797
Mail: info@cmtm.am

№ 3-138
«03» 07 2024թ.

"Պեգաս -2020 "ՍՊԸ տնօրեն

Վ.Էլոյանին

Ծանուցում

(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծարելու մասին)

Հարգելի՛ պարոն Էլոյան,

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ (այսուհետ՝ Գնորդ) և "Պեգաս -2020 "ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի ապրիլի 19-ին կնքած № ՉՀԳ-ԷԱՃԱՊՁԲ-2024/7-3 » ծածկագրով պայմանագրի,N1 համաձայնագրի շրջանակներում «Պեգաս -2020 » ՍՊԸ-ն պարտավորվել էր մատակարարել պայմանագրով սահմանված «Բրոնզե գլանվածք Փ-20-չափաբաժին 16» ապրանքը մինչև 2024 թվականի հունիսի 20-ը պայմանագրի պահանջներին համապատասխան,սակայն հրաժարվում է մատակարարել:

Համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը(մասնակի կամ լրիվ),եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:Նույն պայմանագրի 2-րդ մասի 2.1.7.1 կետ բ/ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում,եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10օրից ավել:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 33-րդ կետի 16-րդ ենթակետը, պայմանագրի 8.11 կետը՝ «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ միակողմանի լուծում է ՉՀԳ-ԷԱՃԱՊՁԲ-2024/7-3 » ծածկագրով պայմանագրի 16-րդ չափաբաժնի մասով 2024թվ-ի հուլիսի 3-ից :

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը (չմատակարարված ապրանքի չափաբաժնի մասով) համարելով այն մասնակի լուծված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 33-րդ կետի 4-րդ ենթակետի պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են 0,05% տույժեր և 0,5 % տուգանքներ:

''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ,եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5օրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանգրի կատարման/4000դր/ և որոկավորման ապահովումները/6000դր./ ընկերության 1570005356230100 հաշվեհամարին չմատակարարված չափաբաժնի մասով/16-րդ չափաբաժին/,ապա ''Պեգաս -2020 ''ՍՊԸ չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

X _____

''ՁՀԳ''ԲԲԸ տնօրեն
Գ.Զախարյան

Կատարող գնումների համակարգող հաշվապահ
Ս.Հակոբբյոխվյան